ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» Դեկտեմբերի 2023 թ. N 54-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 126-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի «Կազմակերպությունների ընտրության և պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով մշտապես գործող որակավորման հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու, որակավորման կարգը և պայմանները, կազմակերպությունների հետ կնքվող՝ աջակցող միջոցներ տրամադրելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» 126-Ա/1 հրամանի՝

1) N 1 հավելվածում «Մ. Գրիգորյան – Հանձնաժողովի անդամ (ՄՄԾ բժշկասոցիալական փորձաքննության և աջակցող միջոցներով ապահովման վարչության աջակցող միջոցներով ապահովման բաժնի պետ)» բառերը փոխարինել «Մ. Գրիգորյան – Հանձնաժողովի անդամ (ՄՄԾ բժշկասոցիալական փորձաքննության, անձի

ֆունկցիոնալության և աջակցող միջոցներով ապահովման վարչության աջակցող միջոցներով ապահովման բաժնի պետ)» բառերով:

2) N 2 հավելվածում Ձև 1-ի և Ձև 2-ի 2-րդ սյունակներում «նախարարության կողմից հաստատված» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 7 և N 8 հավելվածներով հաստատված» բառերով:

3) 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածի՝ պայմանագրի ձևի N 1 հավելվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի 2023 թվականի փետրվարի 22-ի N 16-Ա/2 հրամանով սահմանված աջակցող միջոցների նվազագույն պահանջները կիրառվում են պետական բյուջեի կողմից պետական և առանց պետական հավաստագրերի հիման վրա աջակցող միջոցների տրամադրման նկատմամբ:»:

3/22/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն"ՄԿՐՏՉՅԱՆ